

ՔԱՐՈՉԽՕՍԱԿԱՆ

**ԱՂԱՆ ՎՐԴ. ԳՈԳՉԵԱՆԻ ՏԱՐԵՄՈՒՏԻ ՔԱՐՈՉՐ՝
ԽՕՍՈՒԱԾ Ս. ՅԱԿՈԲԵԱՆՅ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՁ
(14 Յունուար, 2025)**

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն

Սիրելի հաւատացեալ քոյրեր եւ եղբայրներ, այսօր Երուսաղէմի մէջ Ամանոր է: Մեր վանքի աւանդութեան համաձայն մենք Նոր տարին կը սկսինք Սուրբ Պատարագով եւ աղօթքով:

Տարեմուտը Հայ Առաքելական Եկեղեցւոյ տօն մը չէ, սակայն այն իր մէջ մեծ խորհուրդ ունի: Խորհուրդ մը, որ կրնայ մեզի օգտակար ըլլալ՝ անդրադառնալու անցնող տարւոյ մեր ապրած կեանքին եւ քննելու, թէ որքանո՞վ 2024 թուականի այդ մէկ տարւոյ ժամանակը մենք գործածեցինք մէկ քայլ աւելի Աստուծոյ մօտենալու համար: Արդեօք այդ ժամանակը մենք գործածեցինք աւելի դժոխքի՞ն մօտենալու, թէ Աստուծոյ Արքայութեան: Մեր կեանքը ժամանակի ընթացքին մէջ կը հոսի դէպի հանգրուանի մը, որու ճիշդ տեղը մենք կ'որոշենք՝ մեր ապրած կեանքով ու գործերով, թէ անիկայ պիտի ըլլայ յաւերժական շարժարանքներու դժոխքը, թէ՞ յաւերժական կեանքի Արքայութիւնը: Մեզմէ ոչ մէկը կրնայ իր կեանքի ժամանակը կեցնել, եւ մարդկութեան մէջ ոեւէ մէկուն այդ կարողութիւնը չէ տրուած, սակայն ամէն մէկուն հնարաւորութիւն տրուած է այդ անցողիկ ժամանակը ճիշդ գործածելով այն յաւերժացնել: Այլ խօսքով, մենք կրնանք մտնել ասդեանական կեանքի ընթացող գետին մէջ եւ մեր ճիշդ, բարի եւ աստուածահաճոյ գործերով այդ գետի ընթացքը մեզի համար յաւերժական դարձնել:

Սիրելիներ, եկէք այսօր՝ Տարեմուտի այս առաջին օրը, մենք զմեզ հարցնենք թէ 2024 թուականը, որը արդէն անցեալին կը պատկանի, որքանո՞վ գործածեցինք ի նըպաստ մեր ժամանակաւոր կեանքը անժամանակ դարձնելու համար: Եթէ անդրադառնանք եւ մենք զմեզ ըսենք այս կամ այն սխալը պէտք չէր ընէինք, զղջանք կատարած սխալներուն համար, սակայն 2025-ին նորէն նոյն կամ նմանօրինակ սխալները կրկնենք, ուրեմն գերի ենք մեղքին եւ այն ձուլուած է մեր մարմինին եւ ամէն վայրկեան սնունդ կը պահանջէ: Այդպիսով մեր ժամանակաւոր կեանքի ընթացքին ցանկալի հանգրուանի չպիտի հասնինք: Իսկ եթէ 2024 տարին զարդարած էինք բարի եւ աստուածահաճոյ գործերով եւ նոյնը պիտի շարունակենք 2025 թուականին, ուրեմն մենք մտած ենք դէպի յաւերժական կեանք ընթացող գետին մէջ:

Սիրելիներ, 2024 թուականը այլեւս անցեալ է: Ինչպէս որ չենք կրնար ժամանակը կանգնեցնել, այնպէս ալ չենք կրնար անցեալը վերադարձնել, սակայն ներկան մեր ձեռքերու մէջ է: Եթէ այսօրունէ սկսեալ ճիշդ եւ աստուածահաճոյ կեանքով ապրինք, գալ տարի աղուոր անցեալ կ'ունենանք եւ կ'աշխատինք նոյնքան լաւ ապագայ ունենալու համար: Այլ խօսքով, այսօրուան լաւ օրը՝ վաղուայ լաւ անցեալը պիտի ըլլայ եւ յաւերժական կեանքի, Աստուծոյ արքայութեան արժանանալու գրաւականը:

Ուստի եկէ՛ք այս Տարեմուտին միասնաբար աղօթենք առ ամենակարողն Աստուած, եւ խնդրենք, որ Ան մեզի իմաստութիւն շնորհէ, որպէսզի մեր ներկան ապրինք Իրեն հաճելի կեանքով եւ այս ժամանակաւոր կեանքի արահետով ընթանանք դէպի յաւերժութիւն: Եկէ՛ք այս դարաւոր Մայր Տաճարին մէջ մեր պահապան Սուրբ Յակոբ Գլխադիր եւ Սուրբ Յակոբ Տեառնեղբայր առաքեալներու բարեխօսութիւնը խնդրենք, որպէսզի անոնք մեզի առաջնորդեն եւ օրինակ ըլլան իրենց կեանքով, հաւատքով եւ աստուածսիրութեամբ: Եւ վերջապէս, եկէ՛ք աղօթենք որ մեր պահապան Սուրբ Յակոբ Գլխադիրը իր հովանիի ներքոյ պահէ հայ ժողովուրդը եւ Հայ Երուսաղէմը, իսկ Սուրբ Յակոբ Տեառնեղբայր Երուսաղէմի առաջին եպիսկոպոսը առողջութիւն շնորհէ եւ օգնէ Սուրբ Աթոռոյս գահակալ Ամենապատիւ Պատրիարք Սրբազանին, որպէսզի իմաստութեամբ առաջնորդէ այս դարաւոր հաստատութիւնը, մնայ կանգուն եւ անսասան, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս, յաւիտենից. ամէն:

ՄԵԾԵՐԸ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՁԻ ՄԱՍԻՆ

Այս Աստուածային գիրքը, որ ես անհունօրէն կը սիրեմ նոյնիսկ այն ժամանակ, երբ կը թուի, թէ անհաւատ եղած եմ, հիմա կ'ուսումնասիրեմ աւելի ուշադիր, քան երբեւէ... Աստուածաշունչի ընթերցանութիւնը երբեք ինծի առիթ չէ տուած կեղծ բարեպաշտութեամբ տոգորուելու, այսինքն՝ այն սխալ հասկցումով երկրւղածութեամբ, որը բնորոշ է վախկոտներուն եւ մոլեռանդներուն: Ես սորվեցայ սիրել Աստուծոյ եւ մարդոց, մշտապէս ամէն բանէ առաւել փափաքիլ արդարութեան եւ արքայութեան, խոյս տալ սուտէն եւ ներել անիրաւներուն:

ՀՈՐՃ ՊԱՅՐԸՆ

Եթէ Մարդը կրնայ Աստուած ըլլալ, եւ թէ Աստուած կրնայ Մարդ ըլլալ, ապա Յիսուս Քրիստոս ե՛ւ Մարդ է, ե՛ւ Աստուած: Քրիստոս մեզի Իրեն նմանելու հնարաւորութիւն տուաւ:

ՀՈՐՃ ՊԱՅՐԸՆ

Մեր Տիեզերքը անսահման մեծ է եւ անսահման փոքր: Անոր անսահմանութիւնը կը տարածուի անցեալի եւ ապագայի մէջ: Մենք երբեք չենք կրնար հասու ըլլալ անսահմանութեանը: Ատիկա բարձր ճշմարտութիւն է, ատիկա Աստուած Ինքն է:

ՏԷՐԷՔ ՓԱՐՏԸՆ

Ապագային մենք կը տեսնենք, թէ ինչպէս անցեալին, այնպէս ալ ներկայիս գիտութիւնը օգտակար է անոնց համար, որոնք կը հաւատան Աստուծոյ:

ՈՌՃԵՐ ՊԷՔԸՆ